

237. Մխիթարեանք Քրիստօփէի եւ Աւեննայի •

Երբ Մխիթար Ար-
բանայր կնքեց իր արդիւնաշատ կեանքը 1749 ին, իր Միարանութեան կը բողոք 41 Վարդա-
պետ և 13 աշխատաւոր Եղբայր (Ֆրեր) : Տարի մը վերջ, երբ Հ. Ստեփանոս Մեչրոնեան իրեն
յաջորդեց՝ փոփոխութիւններ մտցուց Մխիթարի սանձանած կարգերուն մէջ : Իր օրով, գրեթէ
ամուլ շրջան մը բոլորուած եղաւ՝ կրթական, գրական և տպագրական գործերու արտադրու-
թեան տեսակետով : Այս ընթացքը բնական էր որ դժգոհներ ծնցուներ իր շուրջ . և անա 25
Մայիս 1772 ին կը գումարուի ընդհանուր ժողով . զինքը վար կ'առնեն՝ նոր մը ընտրելու հա-
մար (*) : Այն ատեն Մեչրոնեան արտաքին ոյժի կը դիմէ՝ ակոյեանները զսպելու դիտուածով :
Հակառակորդներու պարագրուիւններէն Աստուածատուր Բարիկեան և Մինաս Գասպարեան հայ-
րեքը զինտրական ուղեկից գունդով կը հեռացուցուին հունկէ, և պահ մը Ս. Ղազարու անքոյր
մենաստանը բառերարեմ կը հանդիմանայ դժպատեն ներմակութեանց : — Վտարեալները կ'անց-
նին ուղղակի ԹԻԻԷՍԹԷ . ուրիշներ ալ (ամենքը 20ի չափ) կը հետեւին անոնց, որով վանքը
կէս'ւակեա կը դարտրկուի՝ երանաշնորձ հիմնադիրին մասնէն հազիւ քառորդ զար վերջ : 19 Մա-



Հ. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԲԱՐԻԿԵԱՆ

յիս 1773 ին իրենց նոր կայանին մէջ վանա-
տուն մը բանալու ծրագիրը կը հասունցունեն
և անդրանիկ Արբանօր անուամբ՝ կ'որոշեն
կոչուիլ **Մխիթարեան**, մինչ Ս. Ղազարեանք
մինչեւ այն ատեն **Ա. Գասնեան** կը յորջոր-
ջուէին՝ նոյն ճգնաւորին անունով : Եռանդը
բորբորած է այլ ևս իրենց հողիներուն մէջ :
Հայ կղզեակին մէջ Մխիթարի գուրգուրանք-
ներովը շաքոյղ, ապա տարապարտուց այդ
հողէն արմատախիլ այս շատաւիրք՝ գտած
իր արմատներուն համար այլուր մը՝ կը բաղ-
ձար նորատունկ վերընձիւղիլ, և, զոգցես
Մայր-Երկիրէն բաժնուելուն համար՝ աւելի
խորարմատ ուռճանայ : — Բարիկեանք որպէս
զի հովանաւորութիւն ապահովեն՝ կը դիմեն
Աստուր Արքունիքին : Մատիա Թեո. Էզա կայս-
րունին բարեբախտաբար չզլանար խնդրուած
առանձնաշնորհումները : Այլ եւս աւստրիա-
նպատակ են իրենք : Կը հիմնեն վանք, տպա-
րան ու դպրոց : Այսպէսով, Հայտրիւնը կ'ու-
նենայ երկշուկ Միարանութիւն մը որուն ան-
դամները լուսաւորութեան առաքեալներ ըլլա-
լու վնն առաջադրութիւնն ունէին լոկ :

* * Քրիստօփէ, 30 Մայիս 1775 ին կայս-

րունայն տուած արտօնագիրին 24րդ համարն էր . «Կը շնորհենք Միարանութեանը իշխանու-
թիւն՝ բանալու հայ. և հռոմ. տառերով տպարան մը» որ տարի մը վերջ արդէն զոյութիւն ու-
նէր հոն «Տպարան Մխիթարեան հայ կրօնաւորաց՝ կայսրաբարչական արտօնութեամբ» տխողո-
տով, և ուրիշ լոյս ընծայուած Ա. գիրքն է **Յարզորակ առ պատգոհասիրութիւն Ս. Աս-
տուածածնի** : — 1795 ին կային 47 տեսակ տառ. (24ը բառին, 7 գերմ., 15 հայ. և 1 յուն.) :
1776-1810, երեսունը իննգ տարուան մէջ հոն տպուեցան 45 հայերէն և 25 հայատառ. տաճ-
կեվար գիրքեր, առանց հաշուելու օտար լեզուով տպագրուածները : Անաստիկ քաղ մը
ատոնցմէ՝ մեծ մասամբ կրօնական : 1776 Այրենարան, 1777 Հոգեւոր երգք, 1783 Յիշատակք
ի վերայ կայսրութեան Չինաց : — Խաչ եօրունըն գիարեքի : — Ճէննենմ աբրըրը : 1784 Առակք
Եզորտի : — Ժամագիրք : — 1785 Ապաստարութիւն թի պատարագի : 1786 Խրատք բարուք քա-

(*) Իրենց պատահաւորին գլխաւոր պատճառը եղած է Հնդկահայերէ կաւտուած մեծագումար նպաստ մը
որուն վրայ Մեչրոնեան Արբանայր իր ռիես բնոյթով... բուխի հոսած էր, ապա՛նչ չկախելով իրաւացի գանգա-
սեռուն իմաստուն միարաններու որոնք կը բաղձային նոյն դրամը յաւկացուել վանքին մէջ աշխարհական կրթա-
րանի մը բացման, զարկ տալու համար կրթական գործին :